20-ՐԴ ՆԻՍՏ

20 սեպտեմբերի, երեկոյան ժամը 7, 1918թ.

Նախագահը բաց անելով նիստը՝ հայտարարում է օրակարգը՝

1. Գաղթականության խնամատարության մասին օրինագծի ընթերցումը.
2. Պատգամավորական օրապահիկի մասին օրինագծի վերջին ընթերցումը.
3. Օրինագիծ օրենքներ հրատարակելու մասին.
4. Դիլիջանում բացվելիք գանձարանի վերաբերյալ օրինագծի հաստատումը.
5. Կառավարության պատասխանը հարցումներին և հարցապնդումներին.
6. Ընթացիկ գործեր:

Օրակարգի Ա հարցի մասին զեկուցում է *Ռ. Տեր-Մինասյանը*, հայտնելով, որ արդեն նախորդ նիստում օրինագծի հիմնական սկզբունքները քննվել և ընդունվել են, ուստի ինքը անցնում է օրինագծի հոդված առ հոդված ընթերցմանը:

Օրինագիծը իր հավելումներով և ուղղումներով դրվում է քվեարկության ու ամբողջովին ընդունվում և հանձնվում է խմբագրական հանձնաժողովին:

Խմբագրական հանձնաժողովի անդամ Ս. Տիգրանյանը կարդում է պատգամավորների օրապահիկի օրինագիծը, որը և ստանում է վերջնական հաստատություն խմբագրական հանձնաժողովի առաջարկած ձևով:

Ս. Տիգրանյան - Օրենսդրական հանձնաժողովի կողմից կատարվում է օրենքներ հրատարակելու օրինագծի Բ ընթերցումը, որը ամբողջովին ընդունվում է, բացի Ա հոդվածի երկրորդ վերսիայի:

Այնուհետև խորհրդարանը անցնում է կառավարության պատասխաններին՝ տրված հարցումների և հարցապնդումների առթիվ: Բոլոր հարցումներն ու հարցապնդումները ուղղված են ներքին գործերի մինիստրին:

Ն.Գ. մինիստր - Պատասխանում է սոց. հեղ-ի խաղողի մենաշնորհի վերաբերյալ հարցին: Քանի որ պարենավորման բաժանմունքն է հոգում զորքի պարենը և որովհետև հույս ունի, որ խորհրդարանը շուտով խաղողի մենաշնորհ կմտցնի, ուստի այդ ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ է կատարվում միայն և ոչ մենաշնորհը կիրառվում:

Հ. Ազատյան - Որտեղի՞ց է արվում ծախքերը:

Ն.Գ. մինիստր - Ծախքը արվում է պարենավորման բաժանմունքի միջոցներով, բայց որովհետև գլխավոր հոգսը զորքի պարենավորումն է, ուստի և ծախսերի որոշ մասը հատկացնում է զին. մինիստրը:

Անցնելով Գ. Ենգիբարյանի հարցումին, հայտնում է, որ մինչև այժմ իր կարգադրությամբ ապօրինի խուզարկություններ չեն եղել: Արդեն հայտարարվել է ի գիտություն քաղաքացիներին, որ խուզարկություններ կարող են կատարել նրանք, որոնք իր ստորագրությամբ թղթեր ունեն:

Պատասխանելով ցորենի գինը բարձրացնելու առթիվ եղած հարցումին, ասում է, որ դրա պատճառը արտասահմանից բարձր գնով (3000 ռ.) ցորենի ներմուծումն է: Ինչ վերաբերում է փայտի և ածուխի վաճառքի արգելմանը, պետք է ասել, որ մենաշնորհ նրանց վրա չկա, բայց կան երկու օրինական արգելքներ. անտառային օրենքի գործադրությունն է, որ վերջերս շատ խիստ կերպարանք է ընդունել, որովհետև անտառային հսկիչները նկատել են, որ Դարաչիչակի և Դիլիջանի անտառները անխնա կերպով փչացվում են, երկրորդն այն է, որ խիստ պատժի են ենթարկվում այն գաղթականները, որոնք ազատ մնացած գյուղերի տների փայտերը վաճառում են, փայտերն էլ ռեկվիզիցիայի են ենթարկվում: Անցնելով մյուս հարցին, պատասխանում է, որ թե' իր կողմից և թե' քաղ. ինքնավարության կողմից միջոցներ են ձեռք առնվում որբերին հավաքելու համար. բայց օրեցօր որբերի թիվը շատանում է, որովհետև գավառից գալիս են քաղաք, որի համար գավառներում էլ կհիմվեն որբանոցներ:

Հ. Ազատյան - Քաղ[աքային] ինքնավարությունները իրենց գործունեությամբ միշտ էլ օրինակելի են եղել ամենուրեք, բայց Երևանի [քաղաքային] ինքնավարությունը միանգամայն հեռու է օրինակելի լինելուց: Ամբողջ ինքնավարության գործը տանել մի քաղաքագլխով և վարչության մի անդամով, նշանակում է խախտել ինքնավարության հիմքերը: Սա է պատճառը, որ քաղաքի թե' պարենավորման, թե' որբերի ու գաղթականների և թե' քաղաքի մաքրության գործը կաղում է: Այդպիսի ինքնավարությունը հասարակական չարիք է, ուստի և կառավարությունը, հանձին ներ[քին] գործ. մինիստրի, պիտի միջամտի նրա գործերին և հանուն հասարակական շահերի կամ պիտի նախկին ցուցակներից լրացնի անդամների թիվը, կամ նոր ընտրություններ կայացնի:

Ն.Գ. մինիստր - Քաղաքային ինքնավարությունը ղեկավարվում է մի քաղաքագլխով և վարչության անդամով նրա համար, որովհետև նախկին ընտրության ժամանակ շատ դրսեցիներ են ընտրվել, որոնք հեռացել են: Դրան պետք է ավելացնել, որ թուրք պատգամավորներն էլ գաղթել են մեր երկրից:

Ինչ վերաբերում է դումայի անդամների թիվը լրացնելուն նախկին ցուցակներով, դրա մասին ինքը կարգադրություններ է արել: Միաժամանակ համաձայն Կերենսկիի կառավարության հաստատած օրենքի, քաղ. դումայի անդամները պետք է ընտրվեն մեկ տարով, ուստի և դեկտեմբերի 10-ին նշանակել ենք նոր ընտրություններ:

Այնուհետև *Ս. Խաչատրյանի* առաջարկությամբ հարցապնդումը հանձնվում է օրենսդրական հանձնաժողովին, որից հետո նիստը փակվում է:

«Ազատ», 2 հոկտեմբերի 1918թ.